ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 22.07.2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱԾՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ ԿԳ-26157-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Մարինե Ֆարմանյանի, խորհրդի անդամներ՝ Պավել Գյուլումյանի, Թամարա Բաղդասարյանի, Վարազդատ Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի, էմին Բեգլարյանի, Դավիթ Մելքոնյանի, Ռոման Ահարոնյանի, Արսեն Հարությունյանի, Ռուբեն Հակոբյանի և Ցոլակ Մարգարյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-26157-2-Ա որոշման բողոքարկումը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Հովհաննես Գառնիկի Թադևոսյանը **(այսուհետև նաև՝ Դիմող կամ Բողոքաբեր)**, 12.03.2026թ. դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ),** փաստաբան Տիգրան Սարգսյանին վերագրել է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, ինչպես նաև հանձնարարության կատարման ընթացքի վերաբերյալ չտեղեկացնելու վարքագիծը:

Պալատի նախագահի 13.04.2026թ. թիվ 281-Ա/ԿԳ-26157 որոշմամբ փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև՝ Կանոնագիրք)** 3.5.5 և 3.6.1 ենթակետերի

խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետև՝ Հանձնաժողով**), 22.07.2026 թվականի թիվ **ԿԳ**-26157-2-**Ա** որոշմամբ (**այսուհետև՝ Որոշում**) Փաստաբանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-26157 կարգապահական վարույթը կարճել է:

Դիմողը Որոշման դեմ 25.09.2026թ. բողոք է ներկայացրել:

2. **ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ- ԿԳ**-26157-2-**Ա որոշման էությունը.**

Հանձնաժողովը փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ Օրենքի 19-**րդ հոդվածի** 1-**ին մասի** 1-**ին և** 2-**րդ կետերի**, **ինչպես նաև Կանոնագրքի** 3.5.5 **և** 3.6.1 **ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել է հետևյալ պատճառաբանությամբ**.

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման մասով Հանձնաժողովն արձանագրել է, որ Փաստաբանը կատարել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ ներկայացնելով հեռակա վարույթ իրականացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ երկու միջնորդություն: Նշված միջնորդությունների մերժումն ինքնին չի վկայում Փաստաբանի մասնագիտական պարտականությունների ոչ պատշաճ կատարման մասին:

Միաժամանակ, չի հաստատվել, որ Փաստաբանը ստանձնել է քննիչի որոշումները բողոքարկելու պարտավորություն կամ չի կատարել Պայմանագրով նախատեսված որևէ այլ գործողություն: Ապացույցներով չեն հաստատվել նաև Դիմողի պնդումները՝ Փաստաբանի կողմից դրական արդյունք երաշխավորելու, միջնորդությունը ոչ պատշաճ հիմքով ներկայացնելու և մերժման դեպքում գործընթացը դատական կարգով շարունակելու պարտավորություն ստանձնելու վերաբերյալ:

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման մասով Հանձնաժողովը նշել է, որ վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին տեղեկացնելու պարտականությունը գործում է ստանձնած հանձնարարության կատարման ընթացքում:

Տվյալ դեպքում Դիմողը պնդել է, որ Փաստաբանն իր զանգերին և հաղորդագրություններին չի պատասխանել երկրորդ միջնորդության մերժումից հետո: Մինչդեռ գործի նյութերով չի հաստատվել, որ այդ ժամանակահատվածում առաջացել են Պայմանագրով նախատեսված հետագա ներկայացուցչության իրականացման պայմանները, մասնավորապես՝ Դիմողի՝ Հայաստանի Հանրապետություն ժամանելու և համապատասխան վճարումը կատարելու հանգամանքները: Հետևաբար չի հաստատվել, որ Փաստաբանը հանձնարարության կատարման ընթացքում խախտել է Դիմողին

տեղեկացնելու և նրա հարցերին պատասխանելու պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը եզրահանգել է, որ Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի, ինչպես նաև Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի խախտումները չեն հաստատվել, ուստի որոշում է կայացրել կարգապահական վարույթը կարճելու մասին:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Դիմողը 25.09.2026թ. ներկայացրած բողոքով հայտնել է իր անհամաձայնությունը Հանձնաժողովի որոշման հետ՝ ըստ էության կրկնելով նախկինում ներկայացված դիրքորոշումները:

Մասնավորապես, Դիմողի պնդմամբ՝ Հանձնաժողովը պատշաճ չի ուսումնասիրել Փաստաբանի կողմից կատարված գործողությունների իրավական բովանդակությունը, տրամադրված տեղեկությունների ամբողջականությունն ու ճշգրտությունը, Դիմողին իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ պատշաճ տեղեկացնելու հանգամանքը, ինչպես նաև Փաստաբանի գործողությունների և առաջացած հետևանքների միջև պատճառահետևանքային կապը:

Դիմողը նաև նշել է, որ գործի նյութերը, այդ թվում՝ կողմերի բացատրությունները, ներկայացված փաստաթղթերը, վճարված գումարների և ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները, պետք է գնահատվեին համակցության մեջ, մինչդեռ առանձին ապացույցների մեկուսացված գնահատումը բավարար չէր կարգապահական վարույթը կարճելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը Դիմողը խնդրել է բավարարել բողոքը:

4. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի միջև 22.12.2025թ. Փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրի պատճենով* ***(այսուհետև՝ Պայմանագիր):***

2. Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանը Հովհաննես Թադևոսյանի դեմ հարուցված զինվորական քրեական գործի շրջանակներում ներկայացնում է միջնորդություն քննչական կոմիտե հեռակա վարույթ սկսելու համար, Հովհաննես Թադևոսյանի ՀՀ գալու դեպքում սույն պայմանագրի 2-րդ կետի համաձայն վճարումը կատարելուց հետո ներկայացնում է վերջինիս շահերը զինվորական քրեական գործի ողջ ընթացքում: *Սույն փաստը հաստատվում է 22.12.2025թ. Պայմանագրի պատճենով:*

3. Պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ ծառայության արժեքը կազմում է 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, որից 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը վճարվում է պայմանագրի կնքման պահին, իսկ մյուս 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամը վճարվում է հեռակա վարույթի միջնորդությունը բավարարելու դեպքում: *Սույն փաստը հաստատվում է 22.12.2025թ. Պայմանագրի պատճենով:*

4. Փաստաբանի կողմից ՀՀՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչություն ներկայացվել է երկու միջնորդություն՝ հեռակա վարույթ իրականացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: *Սույն փաստը հաստատվում է միջնորդությունների պատճեներով, ինչպես նաև կողմերի բացատրություններով:*

5. ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ՝ Է.Մ.Անտոնյանի կողմից մերժվել են Փաստաբանի կողմից ներկայացված միջնորդությունները: *Սույն փաստը հաստատված է համարվում 14.01.2026թ. և 09.02.2026թ. որոշումների պատճեներով, ինչպես նաև Դիմողի բացատրությամբ:*

6. Դիմողն իր դիմումում պնդել է, որ երկրորդ միջնորդության մերժումից հետո Փաստաբանն այլևս չի պատասխանել իր զանգերին և հաղորդագրություններին: *Սույն փաստը հաստատվում է Դիմումով:*

5. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.11-**րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝** ***բողոքի քննության ժամանակ խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում***:

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:

Վերոգրյալ իրավական կարգավորումներից հետևում է, որ Խորհուրդը Հանձնաժողովի որոշման իրավաչափությունը գնահատում է բացառապես բողոքում ներկայացված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ պարզելով, թե արդյոք դրանք բավարար հիմք են բողոքարկվող որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու համար, իսկ նման հիմքերի բացակայության դեպքում որոշում է կայացնում Հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին:

Սույն գործով Բողոքաբերը, ըստ էության, վիճարկում է Հանձնաժողովի որոշման հիմնավորվածությունը՝ պնդելով, որ կարգապահական վարույթը կարճվել է առանց գործի

հանգամանքների ամբողջական ուսումնասիրության և ներկայացված ապացույցների համակողմանի գնահատման:

Խորհուրդը, գնահատելով Բողոքաբերի նշված փաստարկները, արձանագրում է, որ Հանձնաժողովը կարգապահական վարույթի շրջանակներում ուսումնասիրել է Փաստաբանի և Դիմողի միջև կնքված պայմանագիրը, Փաստաբանի կողմից ներկայացված միջնորդությունները, դրանց վերաբերյալ քննիչի որոշումները, ինչպես նաև կողմերի ներկայացրած բացատրությունները և այլ մյուս ապացույցները:

Նշված ապացույցների գնահատման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարել, որ Փաստաբանը կատարել է Պայմանագրով տվյալ փուլում ստանձնած պարտավորությունները՝ ներկայացնելով հեռակա վարույթ իրականացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ միջնորդություններ: Միաժամանակ, Հանձնաժողովը եզրահանգել է, որ միջնորդությունների մերժումն ինքնին չի վկայում Փաստաբանի մասնագիտական պարտականությունների ոչ պատշաճ կատարման մասին, իսկ քննիչի որոշումները բողոքարկելու կամ գործով հետագա գործողություններ կատարելու պարտավորություն ստանձնելու հանգամանքը չի հաստատվել:

Ինչ վերաբերում է Փաստաբանի կողմից Դիմողի զանգերին և հաղորդագրություններին չպատասխանելու վերաբերյալ պնդումներին, ապա Հանձնաժողովը գնահատել է նաև նշված հանգամանքը՝ արձանագրելով, որ Դիմողի մատնանշած ժամանակահատվածում Պայմանագրով նախատեսված հետագա ներկայացուցչության իրականացման պայմանների առաջացումը չի հաստատվել: Հետևաբար չի հաստատվել նաև Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.6.1 ենթակետով սահմանված պարտականության խախտումը:

Այսպիսով, Հանձնաժողովը ոչ միայն ուսումնասիրել է Փաստաբանի կողմից կատարված գործողությունները, այլև դրանք գնահատել է ստանձնած պայմանագրային պարտավորությունների և Կանոնագրքի համապատասխան պահանջների համատեքստում՝ ներկայացնելով իր եզրահանգումների փաստական և իրավական հիմնավորումները:

Խորհուրդը հարկ է համարում ընդգծել նաև, որ կարգապահական վարույթի շրջանակներում գնահատման ենթակա է ոչ թե Փաստաբանի կողմից ստանձնած հանձնարարության ցանկալի արդյունքին չհասնելու հանգամանքը, այլ նրա գործողությունների կամ անգործության համապատասխանությունը Օրենքով և Կանոնագրքով սահմանված մասնագիտական պարտականություններին: Հետևաբար Փաստաբանի ներկայացրած միջնորդությունների մերժումը կամ Դիմողի համար անբարենպաստ իրավական հետևանքների առաջացումն ինքնին բավարար չէ կարգապահական խախտման առկայությունը հաստատելու համար:

Այս պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Բողոքաբերի ներկայացրած

փաստարկները չեն հերքում Հանձնաժողովի կողմից հաստատված փաստական հանգամանքները և դրանց հիման վրա կատարված իրավական գնահատականները, ինչպես նաև չեն հիմնավորում գործի լրացուցիչ քննություն իրականացնելու անհրաժեշտությունը:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը եզրահանգում է, որ Հանձնաժողովի 22.07.2026թ. թիվ ԿԳ-26157-2-Ա որոշումը հիմնավորված է, իսկ Բողոքում ներկայացված փաստարկները բավարար հիմք չեն այն վերացնելու համար:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 39.11-**րդ հոդվածի Խորհուրդը՝**

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 22.07.2026 թվականի «Փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 2004) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-26157-2-Ա որոշման դեմ Հովհաննես Թադևոսյանի կողմից 25.09.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 22.07.2026 թվականի թիվ ԿԳ-26157-2-Ա որոշումը:

3. Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Մարինե Ֆարմանյան**

23 հոկտեմբերի 2026թ.
թիվ ԿԳ/30-Ա
ք. Երևան